ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԱՑ-LO-2019/37

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.05.2019թ. թիվ 26/26-1/7369-2019 գրությամբ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 02.05.2019թ. թիվ 215 գրության հիման վրա, 06.05.2019թ. «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 02.05.2019թ. թիվ 215 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար սննդամթերք ձեռք բերելու նպատակով գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով մրցույթին 04.04.2019թ-ին էլեկտրոնային եղանակով հայտ են ներկայացրել նաև Ա/Ձ Վիկտորյա Սամվել/անը և «Կառոլ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ-ի թիվ 4 որոշմամբ Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանը 2-րդ, 5-րդ, 10-րդ և 63-րդ չափաբաժիններով և «Կառոլ» ՍՊԸ-ն 25-րդ չափաբաժնով ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով 17.04.2019թ-ին էլեկտրոնային եղանակով հարցում էր ուղարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ: 22.04.2019թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից էլեկտրոնային եղանակով ստացվել էր պատավորությունների վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 8000 ՀՀ դրամ, իսկ «Կառոլ» ՍՊԸ-ն 288000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ՝ որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով 23.04.2019թ-ի թիվ 5 որոշմամբ Ա/Ձ Վիկտորյա Սամվել/անի և «Կառոլ» ՍՊԸ-ի հայտերը մերժել էր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանն և «Կառոլ» ՍՊԸ-ն կամ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը գնահատող հանձնաժողովին լրացուցիչ տեղեկատվություն չեն ներկայացրել:

Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանին և «Կառոլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ հարցը քննարկելու համար Ձեզ ենք ուղարկում Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանի և «Կառոլ» ՍՊԸ-ի

հայտերի, գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ-ի թիվ 4 և 23.04.2019թ-ի թիվ 5 արձանագրությունների, ՀՀ ԿԱ ՊԵԿ ուղարկված հարցման և պարտավորությունների վերաբերյալ ստացված տեղեկատվության պատճենները:»:

3. <u>«Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.05.2019թ. գրությամբ դիմել է «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2019թ. թիվ 26/26-1/7369-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված գրությամբ հայտնել է, որ.

«ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին 04.04.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, որին ի պատասխան տրվել է եզրակացություն, համաձայն որի Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /04.04.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ /8,000 ՀՀ դրամ/:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն և որոշել մերժել Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին

մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն 04.04.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 8,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ի մոտ 8,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Գտնում ենք, որ Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում չի խախտել ստանձնածորևէ պարտավորություն հետևյալ հիմնավորմամբ:

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը

ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից), պարզվել է (ՀՀ ԿԱ ՊԵԿ թեժ գծին կատարած զանգից), որ 2018թ. հուլիսին վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում կատարվել են փոփոխություններ, և որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն է դիտարկվել նաև դրոշմանիշների վճարը՝ առանձին տողի ձևով: Պետք է նշել, որ վկայակոչված հրամանը հասանելի չէ, այն հրապարակված չէ, և Վիկտորյա Սամվելյան Ա/Ձ-ն չէր կարող տեղյակ լինել, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը այսուհետ դիտարկվել է որպես վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն, և Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնելով և հավաստելով, որ բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նման պայմաններում, մեր կարծիքով, չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի

քարտի» քաղվածքի համաձայն՝ Ա/Ձ-ն 04.04.2019թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի (կցվում է): Եվ պետք է նշել, որ Ա/Ձ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /04.04.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ Ա/Ձ-ին թյուրիմացության մեջ է գցել նաև այն հանգամանքը, որ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները դիտարկվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին: Միևնույն ժամանակ ՀՀ հարկային օրենսգիրքը անդրադառնալով հարկերի և տուրքերի համակարգին, օրենսգրքի 7-րդ հոդվածում սպառիչ թվարկել է ՀՀ-ում կիրառվող վճարների բոլոր տեսակները, որոնց շարքում բացակայում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը, և վերոհիշյալ տրամաբանությամբ, ըստ Ընկերության, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշների վճարը չպետք է դիտարկվեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Բացի այդ, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը վճարվում է Հիմնադրամ, մինչդեռ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները պետք է վճարվեն ՀՀ պետական կամ համայնքների բյուջեներ:

Խնդրում ենք հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթներում արդենիսկ քննվել են դրոշմանիշային վճարների

վերաբերյալ տասնյակ բողոքներ և «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ընթացակարգեր, որոնց քննության ընթացքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք դրոշմանիշների վճարը, որպես ժամկետանց հարկային պարտավորություն չեն դիտարկել, քանի որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտ» քաղվածքում որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ և առկա է Ընկերությունների կողմից իրազեկված չլինելու հանգամանքը:

Բացի այդ, «Լոռի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ի 13.09.2018թ. ներկայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/83 բողոքի քննության շրջանակներում ՀՀ ՊԵԿ-ի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը 12.09.2018թ. ուղղված գրությամբ (մատնանշված է 01.10.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/83 որոշմամբ) հենց ՀՀ ՊԵԿ-ը հայտնել է հետևյալը. «Դրոշմանիշային վճարների գծով առկա պարտավորությունները անհրաժեշտ է չդիտարկել որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորություն»:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ դիմում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ՝ վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանք ստանալու նպատակով, որով կհիմնավորենք, որ 8000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը՝ դրոշմանիշային վճարի գծով է /ՀՀ ՊԵԿ-ից տեղեկանքը ստանալուն պես կտրամադրենք ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին/:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել

է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 04.04.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն:

Գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 2-րդ, 5-րդ, 10-րդ և 63-րդ չափաբաժինների առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչել «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (04.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 8000 ՀՀ դրամ գումարի չափով:

Գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 04.04.2019թ. դրությամբ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գուամրների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.05.2019թ. տրված թիվ 1385 տեղեկանքի համաձայն՝ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն 04.04.2019թ. դրությամբ ունի 8000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարների գծով պարտավորություններ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 06.05.2019թ. թիվ 26/26-1/7369-2019 գրությամբ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նար Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. … իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի (կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում 2-րդ, 5-րդ, 10-րդ և 63-րդ չափաբաժինների առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչել «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (04.04.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 8000 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Մասնակիցը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (04.04.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է համարվի որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն, և անհրաժեշտության դեպքում ընդունվի այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.05.2019թ. թիվ 26/26-1/7369-2019 գրությամբ «Վիկտորյա Սամվելյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ